

ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

Թ. 92բ.—(Ո)վ որդիք լուսոյ դասք քրիստոնէից յորժամ ընթեռնուք ըզսուրբ աւետարանս յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զԽօջայ Գրիգորն, որ ըստացաւ ըզսուրբ աւետարանս ի փրկութիւն հոգոյ իւրոյ և ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ. և զհայր իւր զԽօջայ Մալիջանն, և զմայրն ըզՀոհիփսիմէն, և զուգակիցն իւր (թ. 93ա) զիսնարհամիտ և հեզահոգի Սողոմէրն, և զորդիքն իւր Սուքիասն, Մէլիքն, Ոսկանն, և զդստերքն իւր զԽաթուն Դշխոյնն, և զՏատումն Գուլիխասն. և Տէր Աստուած Յիսուս Քրիստոս զկենդանիսն պարագայց ամօք պահեսցէ մինչև ի խորին ծերութիւնն, և զհոգի Խօջայ Գրիգորին որ յայսմ ամի փոխեցաւ առ Տէր ժառանգորդս արասցէ երկնից արքայութեանն, և կամարարաց իւրոց սրբոց ընտրելոցն և սրբոյն Մարկոսի աւետարանչին. դասակից և պսակից արասցէ հանդերձ իւրովք ընկնջեցելովքն. և ընդմայ փառք յերիս յաւիտեան, Ամէն:

Թվն. Մարդեղութեան Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ՌՈԼԵ (1635 թ.?—Ն. Մ.), և հայոց ՌԿԵ (1616 թ.—Ն. Մ.). գրեցաւ սուրբ աւետարանս, բայց յիշատակարանս ՌՁԲ (1633 թ.—Ն. Մ.). գրեցի ես ձիք Տէր ընՍտեփանոսս: Աշխարհ (գրված է գաղափարագրով):

Թ. 145բ.—(Ց)իշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զգովելի պարոնն զԽօջայ Գրիգորն որ ըստացաւ ըզսուրբ աւետա(րա)նս ի հալալ ընչից իւրոց և յարդար վաստակոց. և զհայրն իւր զԽօջայ Մալիջանն. և զմայրն իւր ըզՀոհիփսիմէն, և զեղբայրն իւր զԽօջայ Բաղումն, և զորդիքն իւր Սուքիասն, Մէլիքն, Ոսկեանն, և դըստերքն Դշխունն, Տատումն, Քրիստոս Աստուած ողորմեսցի սոցայ ըստ մեծի ողորմութեան իւրում, բարեխօսութեամբ սուրբ աւետարանչին Ղուկասու, և ընդմա փառք յաւիտեան ամէն: Թվն. ՌՁԲ (1633 թ.—Ն. Մ.) մայիս ԺԵ:

(Հ)ամբարձմանն կարդա զսա:

Թ. 146ա.—Յիշեցէք ըզկող(ակիցն) Խօջայ Գրիգորին ըզԽաթուն Սողոմէրն: Եւ զմեղաւամած գծողս զՍտեփանոս էրէցս յիշեցէք ի Քրիստոս, ով սուրբ ընթերցողք. աղաչեմ:

Թ. 235բ.—Աւրհնութիւն որ կարդայ, գովութիւն որ լսէ, փառք (թ. 236ա) տուողին, և յիշատակ գրչիս, ամէն: (Այս նախադասությունը միայն գրված է բոլորգրով):

Թ. 236ա.—(Զ)ատացող սուրբ աւետարանիս զԽօջայ Գրիգորն և զկենակիցն իւր զՍողոմէրն, և զպարոն որդիքն իւր զՍուքիասն. ըզՄէլիքն, և զՈսկանն, և զդստերքն իւր ըզԴշ(խ)ունն, և ըզՏատումն, և զհանգուցեալ որդիք և դստերքն իւր Մէլիքն, Սահրատը, Յոհանն, ընՍտեփանոսն, Մանուկն, Հոհիփսիմէն:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№ Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի №№ Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի №№ Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի №№ Ա-ից և Գ-ից:

Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ըզկընջեցեալսն հանգոյ ընդ սուրբս քո յարքայութեան քում. և ըզկենդանիսն անփորձ և անսասան կենաւք պահեայ մինչն ի խորին ծերութիւնն: Բարեխօսութեամբ սրբոյն Յոհաննու աւետարանչին, և ամենայն սրբոց քոց, և քեզ փառք յաւիտեանս ամէն:

Թվն. հայոց ՌՁԲ (1633 թ.—Ն. Մ.), մայիս ԺԵ, աւրն չորեքշաբաթ:

Թ. 301բ.—(Ո)վ դասք լուսերամից. ծընունդք սուրբ աւազանին, գումարք քահանայից և պաշտօնեայք սուրբ եկեղեցոյ. յորժամ ընթեռնուք ըզսուրբ աւետարանս, և վայելէք ամէն առատ շնորհէ սորին. յիշեսջիք ի մաքրափայլ լաղօթս ձեր զստացող սուրբ աւետարանիս ըզԽօջայ Գրիգորն, և զծնօղսն իւր զԽօջայ Մալիջանն, և ըզՀոքփսիմէն, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք:

(Դ)արձեալ յիշեցէք ըզԽօջայ Գրիգորն, և զկողակիցն իւր զՍողոմէրն, և զորդիքն իւր զպարոն Սուքիասն, զՄէլիքն, և զՈսկանն, և զդստերքն զԴշիսոյն, և զԳուլիխասն. յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք:

(Դ)արձեալ յիշեցէք զԽօջայ Գրիգորն և զմիւս մայր իւր զԹիլափաշէն, և զեղբարքն զԽօջայ Բաղումն, զՀայրապետն, և զԱւետիկն, ամէն:

Թ. 302ա.—(Դ)արձեալ յիշեցէք զԽօջայ Գրիգորն, և զհանգուցեալ որդիք և դստերքն իւր Մէլիքն, Սահրատն, Յոհաննն, ըՍտեփանոսն, Մանուկն, Հոիփսիմէն, ամէն:

(Դ)արձեալ յիշեցէք զԽօջայ Գրիգորն, և զպապն իւր զՄէլիքն, և զհանիկն իւր զՍառէն, ամէն:

(Դ)արձեալ յիշեցէք զաւագ որդի Խօջայ Գրիգորին զՍուքիասն և զկենակիցն իւր Թէլումն, և զորդիքն իւր Աստուածատուրն, Մալիջանն, դուստրն Սեփուհին, ամէն:

(Դ)արձեալ յիշեցէք զՄէլիքն, և զկենակիցն իւր Խանիփաշէն, և զհանգուցեալ դուստրն իւր Սեփուհի, ամէն:

(Դ)արձեալ յիշեցէք զՈսկանն, և զկենակիցն իւր Մարիանէն. և զորդին իւր Յակոբջանն. ամէն:

(Դ)արձեալ յիշեցէք զԽօջայ Գրիգորն, և զհանգ(ցեա)լ եղբարքն և եղբարքն իւր. Սաֆարն, Մուշեղն, Աստուածապոլն, Յովանէսն, միւս Սաֆարն, Ղազարն, Ամէն:

Թ. 302բ.—Դարձեալ յիշեցէք զԽօջայ Գրիգորն. և զքորքն իւր Սառէն, Ղադամ Խութլուն, Սալթանն, և զհանգուցեալ քորքն իւր Ինափաշէն, Սառէն, Ղադամ Խութլուն. և զհարն եղբայրն Հայրապետն, և զհարաքվերքն իւր Սալթանն, Աղլանն, Ղադամ Խութլուն, Ուստիանէն, Թլէնին, Խալասէն. յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք:

(Ե)ւ նայ ինքն որ ողորմածն է և գթած յիշողացդ և յիշեցեղոցն ողորմեսցի յիւր միւս անգամ գալըստեանն, և նմայ փառք յանգրաւ յաւիտեան, Ամէն:

(Գ)րեցաւ սակս յիշատակարանս ի թվին հայոց ՌՁԲ (1633 թ.—Ն. Մ.), Մայիս ամսին ԺԵ, Ադամ ԻՁ, պատկերաւորն չորեքշաբաթ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Սսաս: Սուրբ աւետարանս յիշատակ է Եթ.:

Ծառայ Աստուծոյ Վաթան ամէն: Թիվն ՌԾՂԷ (1748 թ.—Ն. Մ.) Թիրեայ ԺԸ օրն Եշ.բի, գրեցի, ամէն:

№ 335
ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 393:—**Պրակները՝** 27, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԻԷ՝ 4, Դ՝ 10, ԻԶ՝ 14: Բացի այդ ձեռագրի սկզբում հավելվածական երկու պրակներ կան՝ 11 և 12 թերթից բաղկացած:—**Մեծությունը՝** 15,8×11,4×5,7 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ ստվարաթուղթ:—**Պահպանակները՝** սկզբում մեկ, իսկ վերջում երկու թերթ հաստարակ թուղթ:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա, 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա, 11բ, 12ա, 12բ, 13բ, 14ա, 15բ, 16ա, 17բ, 18ա, 19բ, 20ա, 21բ, 22ա, 23բ, 335ա—337ա, 339ա և 339բ:—**Տողերը՝** 20:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրությունը՝** ձեռագիրը հայկական մանրանկարչության գեղեցիկ նմուշներից մեկն է: Մատյանում կան չորս ավետարանիչների շատ սիրուն նկարները (26բ, 117բ, 176բ և 268բ), ինչպես նաև չորս գեղեցիկ խորաններ (27ա, 118ա, 177ա և 269ա): Զեռագիրն ունի տասը էջ համաբարբառ (1բ, 2ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 14բ, 15ա, 20բ, 21ա), ինչպես նաև Հիսուսի կյանքից ամբողջական 11 էջ նկարներ (3բ, 4ա, 9բ, 10ա, 13ա, 16բ, 17ա, 18բ, 19ա, 22բ, 23ա): Բացի այդ ձեռագրում կան Հիսուսի հետևյալ նկարները՝ խաչված—169ա, հարություն առած—171բ և խաչը կրող—328բ: Կա Հովհաննես Մկրտչի նկարը՝ 134ա, մարդկային դեմքով թռչուններ՝ 177ա, մարդկային դեմքեր՝ 177ա և 269ա: Մատյանն ունի շատ սիրուն մի մարդագիր (27ա), երկու գազանագիր (118ա և 177ա) և բազմաթիվ թռչնագրեր, զարդագրեր և կենդանագրեր: Ձեռագրում կան նաև շատ գեղեցիկ լուսանցազարդեր, թռչուններ, սրբեր, ծաղիկներ, զարդեր, գմբեթներ, կենդանիներ և խաչեր: Հայկական միջնադարյան մանրանկարչության հիանալի մի օրինակ է սա:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** Մայր Աթոռի Ձեռագրատունն նվեր է ստացել սույն արժեքավոր Ավետարանը Ստամբուլից, արժ. Շավարշ քահանա Պալըմյանից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 173ա.—Համարձմանն կարդա զսա:

(Մատյանի գլխավոր հիշատակարանն ընկել և կորել է):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 11ա.—Նուէր Միածնաէջ Աստուածակառոյց Մայրն մեր ս. Էջմիածնի թանգարանին։

Հայ արուեստի մասունքները իր բուն սեփականատիրոջ վերադարձնելը ամէն հայու նուիրական պարտականութիւնը պէտք է ըլլայ։

Ես անարժանս Սեբաստիոյ Զառա գիւղաքաղաքէն Պալըմեանց տոհմէն Գրիգորի է և Անդիքայէ ծնեալ Ցաւակ, 1954 մարտ 4ին ժողովուրդին փափաքով քահանայ ձեռնադրուած. Տիրոջ սիրով վառուած այս սուրբ մատեանը ցեցակեր ըլլալէ ազա(թ. 11բ)տեսցի։ Աստուած եթէ ինծի դեռ կեանք տայ, ուրիշներ ալ Մայր Աթոռ ղրկելու նախանձախ(նդ)րութիւնով լեցուած եմ։

Որքան, որ այս մատեանս թղթատելու առիթը ունենաք զտոհ(մ)ս իմ յիշելու հաճեցէք։

Ծաւարշ քհ. Պալըմեան

Խոնարհ ծառայ Հայս. Առաք. եկեղեցւոյ։

4—9—1957 Պոլիս։

Թ. 337բ.—Յիշատակ է յա(յ)ս սուրբ յավէտարանէս յԱկնայ գիւղէն խոզակէրցի Թամէնց մահտեսի Կիրակոսին, որդիքն նորայ մհտի. Օվանէս, մհտյ. Մսէրշահ, Յուսքան, Ածտուրէ, տվին Խոզագէր կու ժամէ սուրբ Օհանէս և սորայ գուղէ քաղէլ միզ յէդավ սուրբ ժամէյ հանքալ ցամաք յէկակ ըՍտէմպօլ (թ. 338ա) քղաքս ողորմ. կուտաք սուրբ ...եք յիշատակ։

Թվին ՌՃՂԲ (1743 թ.—Ն. Մ.) սէնէին յիշատակ յարաք սուրբ Կարապետ տամ և որ կարդայ սուրբ յավետարանիս, յիշէ ըզհոգին սորայ մհտի. Կիրակոսին և կողակցին, և մահտեսի Օվանէսին և կողակըցին, և մահտեսի Մսէրշային և կողակցին, և Յուսքայ, Յուսփուրին և կողակցին Ծիրազին, և որդեցէն և դուստէր, ու հոգին Աստուած լուսավորէ յամէն։

Թ. 338բ.—Ծարեի ...ութեամբ սուրբ Կարապետոյ և սուրբ յավետարանի ...Յիշայ Տէր ըզհոգիք էն մեր ննջեցելոց և յարևշատութիւն տուր մահտեսի Խաչատուրին, և կողակիցին մահտեսի Նանաֆարին, և որդուն տիրացու Յարությիւնին, և կողակից Թուրփանտային, և մահտեսիյ Խաչատուրին, դուրսերուն Տուրուհիին և Սրբուհիին, յամէն։

№ 336

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 315։—**Պրակները՝** 27, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԻԱ՝ 4, ԻԶ՝ 10, Բ՝ 11 և ԻԷ՝ 14 թերթից են։—**Մեծությունը՝** 17×13×5,8 սմ.։—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ դիմացկուն թուղթ։—**Կազմը՝** կաշեպատ տախտակ։—**Պահպանակներ՝** չունի։—**Վիճակը՝** բավարար։—**Գրությունը՝** երկսյուն։—**Դատարկ թղթերը՝** 147բ, 243բ և 244ա։—**Տողերը՝** 21—22։—**Գծումները՝** ճնշումով։—**Գիրը՝** բոլորգիր։—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի միջին որակի մանրանկարչություն։ Կան երեք ավետարանիչների նկարները (1բ, 88բ և 244բ), ինչպես նաև չորս խորաններ (2ա, 89ա, 148ա և 245ա)։ Մատյանում կան բազմաթիվ լուսանցազարդեր, ծաղիկներ, թռչուններ, զարդեր, ծառեր և գմբեթներ, ինչպես նաև սիրուն թռչնագրեր, զարդագրեր և մի հատ էլ ձկնագիր-թռչնագիր (142ա)։—**Գրիչը՝** Աստվածատուր։—**Պատվիրատուն՝** Դոլվաթ խանում։—**Ծաղկողը՝** անհայտ։—**Ժամանակը՝** 1657 թ.։—**Վայրը՝** Պարսկաստան (շատ հավանաբար Սպահան)։—**Ծանոթություն՝** ձեռագիրը նվեր է ստացվել Իրանից հայրենադարձ մի հայրենակցից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Դժբախտաբար մի քանի տեղերից կտրվել է և թերի).

Թ. 313ա.—Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանեակ յԵրուսաղէմ։ Սակս յայսմ պատճառի ստացաւ զսուրբ աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնօղաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորացն ամէն։

Յիշեցէք ի Քրիստոս զԴօլվաթ խանումն, և զծնողսն իւր զմահդասի Թարիղուլին, և զԹարխուն փաշէն, և զհօրեղբայրն իւր զՏէր Սարգիսն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք ամէն։

Եւ առաւել յիշել զԴօլվաթ խանումն. և զեղբայրն իւր զՅովանէսն ... զՄար... բին կո... և զա... Մատթ(էոսն, Յո)վանէսն, յիշե(այ)։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԴօլվաթ խանումն և զկողակիցն իւր զԿարապետն, և զորդին իւր զՓիլ(իպոսն)...։

Կրկին անգամ յիշե(այ) զՓիլիպոսն, և պապն զԿիրակոսն, և հանիկն զՄարիամն, և զսոցին որդին Կարապետն, դուստրն Խաթունաղէն յիշ(եայ)։

Թ. 313բ.—(Եւ առ)աւել յիշե(ցէք) ... զՓիլիպոսն ...ն իւր զ... որ... իւր զհանգուցեալ Կարապետն, և զդստերքն իւր, զԾուշանն, զՍալաթին, և զՍողովմէն, յիշեցէք։

Դարձեալ յիշե... իցն ... և յիշ(եցէք)։

Կրկին անգամ յիշ(եցէք) զԴօլվաթ խանումն, և զպապն իւր զՂուզիջանն, և զհանիկն զԳայանէն, և զսոցա որդիքն զԲաբաջանն և զՅէմինն յիշ(եցէք)։

Եւ առաւել յիշեցէք ի Քրիստոս զԲաբաջանն, և զկողակիցն իւր զՄէլիք խաթունն, և զորդիքն իւրեանց զՄէլքոնն, զՏէր Անդրիասն, Բաղտասարն և զՍիմոնն, և զդստերքն իւրեանց Փաշաբէկին, Անապխանն, Էվամէլիքն յիշեցէք և ...։

Դարձեալ յիշեցէք զՄէլքոնն և զկողակիցն իւր զՍալամն, և զորդին Աստուածատուրն յիշեցէք։

Կրկին անգամ յիշեցէք զՏէր Անդրիասն, և զկողակիցն իւր (թ. 314ա) զՍալամն, և զորդին զՎարդանէսն, և դստերսն զՄէրանուշըն, զՍալվին և զԳայիանէն, յիշեցէք։

Եւ առաւել յիշեցէք զԲաղտասարն, և զկենակիցն իւր զԾահզամանն, և զոր(դին) Մարտիրոսն ... անհաս, անքննին, անբաժանելի և միասնական սրբոյ Երրորդութեանն։ Հօրն անեղի և անսկզբնի, և Որդւոյն ծնիցելոյն ի հօրէ անժամանակապէս, և Հոգւոյն սրբոյ բղխեցելոյն անսպառ և անհատ երեք անձն... ութ...։

Կր(կին անգամ) ... զի... կից ... և ... (Աստուա-ծա)տուրն, և զ(Ստեփա)նոսն, և զնան(գու)ցեալ Ստեփան(ոսն), զՍարգիսն, և դստերքն Վա...խաթու(ն) ...ոն Ուստիա(նն), և զ... յաւիտեան-... ժամու և... և առ յապայն ամէն:

Արդ գրեցաւ սուրբ և աստուածաշունչ աւետարանս և կատարումն էառ ի թուականիս Հայոց ՌՃԶ (1657 թ.—Ն. Մ.) ամին ի յերկիրս ... տա...:

Թ. 314բ.—...Եւ առաջնորդութեան մերոյ նահան-գիս Պարսկաստանի, սրբասնեալ և մաքրամիտ նե-զանոգի և բարեհամբաւ քաջ հռետոր և ...:

Եւ արդ ես անգէտս ի գրչաց, անկարգս ի կարգա-ւորաց, մեղաւոր և անարժան, անմիտ և տկար, և ա-ռաջի ամենեցուն ամօթալի և տրուպ, և թշուառական Աստուածատուրս, որ միայն ...բա(նիւ)... նի Ամէն:

Արդ այսպիսում լուսազարդ տառի, և վարդափթիթ բուրաստանի, և անծախելի գանձի, փափագող եղե ջերմեռանդ ... և մեծաւ յու...:

Գ. 315ա.—...ահաւոր գալըստեանն մեղաց թողու-թիւն շնորհեսցէ հանդերձ ննջեցելովք ձերովք յերկ-նից արքայութեանն արժանաւորս արասցէ, Ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս, Սաֆարն և որդին՝ Մնացականն, և կողակիցն իւր Փաշէն, և իւր որդին՝ Մանուկն, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք և ա-մենայն արեան մերձաւորսն. կենդանին և հանգուց-եալսն, և Աստուած ողորմի ասացէք, Ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—ՌՃԶ—1657—Մ(եսրոպ) Եպս.:

Հարսանեաց: Անին գրից: Յիշի յիշեալ լիջիք: (Ա.)-ստուր Սահակեան ...դեան, 1856: Աւետարան: Աս-տուածատուրի գիրն: Աստուածատուծոյի անէսի:

Թ. 43ա.—Ասատուր:

Թ. 87ա.—Վերջ:

Թ. 119ա.—Խուդաւէրդի Զօրաբեան, Սիմոն, Խու-դաւէրդի և կողակից Մարիամին, Աստուածատուր Սիմոնեան:

Թ. 127բ.—1889 գրիցա...:

Թ. 242ա.—1889 գրեցի...:

Թ. 244ա.—Աւետարան:

Թ. 251ա.—Նոյ, Սէմ, Գամ, Յաբեթ...:

Թ. 266բ.—Միրզլին:

Թ. 272բ.—Աբրահամ և Դաւիթ, գրիս տուս սպաս-նին: Յովսիայանումն ով գրեց յեփոնի ալ եկիպտացոց թագաւորն: Յովսիայ անումն օվ գրեց Աւետարան:

Թ. 275ա.—Ասատուր, Սիմոն:

Թ. 278բ.—Թիւ 1856ումն Ապրիլ 18ումն Աստուած պարգևաց երեկուեան ժամուն մի և զուստր ի Մինաս Յովսէփեան:

Թ. 279բ.—Տէր Քրի(ս)տոս: Արքայութիւն բալլիքն Պետրոսի յի Տէր: Ան Շուշնի...:

Թ. 291բ.—Ասատուր, Սիմոն:

Թ. 297բ.—Ծնունդ եգից սեցուց փափկել ի բար-կութեան ...որ գայ ... կարդան...:

Թ. 304բ.—Միրզ Սգիլկէս ի թվ. Հայոց ՌՂԹ վրա. ...:

Թ. 307բ.—Խուդարին:

Թ. 308ա.—Ասատուր, Սիմոն:

Թ. 311ա.—Ասատուր:

Թ. 315բ.—Ասատուր, Աղայջան Պրն. ...Ասատուր:

№ 337
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Թերթերը՝ 235:—**Պրակները՝** 20, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ա՝ 9 և Դ՝ 10:—**Մեծությու-նը՝** 15×10,6×5,3 սմ.:—**Նյութը՝** մաքուր դիմացկուն սպիտակ մագաղաթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, ունեցել է երկու քոնիչներ, որոնք սակայն ժամանա-կին ընկել են: Կազմի երկու երեսին ճնշումով զար-դեր են նկարված:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճա-կը՝** բավարար:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա, 235ա և 235բ:—**Տողերը՝** 18—19:—**Գը-ծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրու-թյուն՝** ձեռագիրն ունի գեղեցիկ մանրանկարչություն: Մատյանում կա ամբողջական էջի ծավալով մի նկար միայն (1բ), մի խորան (2ա) և յոթ գլխազարդեր (27ա, 53բ, 85բ, 110բ, 138բ, 163ա և 188բ): Բացի այդ ձեռագրում կան բազմաթիվ սիրուն թռչնագրեր, զարդագրեր, ձկնագրեր, լուսանցազարդեր, թռչուն-ներ, գմբեթներ և զարդեր:—**Գրիչը՝** Ստեփանոս քա-հանա:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** ան-հայտ:—**Ժամանակը՝** 1653 թ.:—**Վայրը՝** անհայտ, շատ հավանաբար Սպահան:—**Ծանոթություն՝** Մայր Աթո-ռի Ձեռագրատունս նվեր է ստացել այն արժեքավոր ձեռագիրը անծանոթ մի նվիրատուից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 234ա.—Փառք քեզ անսահման և անզուգական անուն՝ անսկիզբն և անփոփոխ, անեղ և անապա-կան էականութիւն, անուր, աներբ, անստուեր, ան-ուստէք, և անժամանակ, յերիս բաժանեալ անձնա-ւորութիւնս, և ի մի տէրութիւն և աստուածութիւն բո-վանդակեալ անքակ միաւորութեամբ, բաժանեալ և որոշեալ միութեամբ, պարզ և անզննին, և թիւ կա-տարեալ, ի միոյ պատճառէ շարժեալ և կնքեալ ի յե-րիս, անեղականք, և անկազմունք, յառաջմէ և յառաջ եկեալ, ի միոյն պատճառէ, որդի ծննդեամբ (թ. 234բ) և հոգի բղխմամբ, ոչ սկսեալք և ոչ դադար-եալք, միակամք, և մի Տէր և Աստուած, Հայր և Որդի և Սուրբ Հոգի. յորում հօր անհասի և անծնի. և որդ-ւոյ նորա միածնի, և Սուրբ Հոգոյն նորոգօղի. փառք և պատիւ գոհացողական երկրպագութեամբ, յանցե-լումն ներկայէս մինչև յաւիտեանս. և յաւիտենից յաւիտեանս ամէն: Աստանօր կատարեցաւ հոգիա-զուարճ երգս Դաւթի մարգարէին, որ ասի սաղմոսա-րան, ի լաւ և յընտիր օրինակէ, ձեռամբ մեղապարտ և բազմամեղ, յոգնաթառալ և մեղաց գերի Ստեփանոս իրիցու, ի թվականիս Հայոց ՌՃԲ (1653 թ.—Ն. Մ.) ամի, սեպտեմբեր ամսո(յ) ութի: Ընդօրս փա-փագող եղեալ յայսմ պերճացեալ տփերիս ... (հիշա-տակարանը կիսատ է մնում, հաջորդ երկու թերթերը պատռվել և կորել են):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբում եղած պատռված մագաղաթի փոքրիկ կտորի վրա գրված է).

243 սէնէ.

1345 տօմարական թարիխ.

1102 սէնէ իգ տիր.

Թ. 1ա.—Եկաւ, գալ ... ինձ ուստուարս արդար ուրիշի անդու ... անդոր արարեր ողորմի ...ելլում աղօթք ձերոց առրդիք մարդկան մէնչև...

Թ. 235ա.—(Գրչափորձեր):

Թ. 235բ.—Թաղումն Քրիստոս Աստուած:

Թաղումըն Քրիստոս Ա.: (Գրչափորձեր):

№ 338

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Թերթերը՝ 252:—**Պրակները՝** 22, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԻԲ՝ 5, Ա՝ 8 և Բ՝ 11 թերթից են:—**Մեծությունը՝** 14,8×10×5,2 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած դիմացկուն հաստ թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով խաչ և զարդեր են նկարված: Նախկինում եղել են երկու բռնիչներ, որոնք ընկել են հետագայում:—**Պահպանակները՝** սկզբում երկու և վերջում մեկ թերթ մագաղաթ, առանց գրության:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 251ա—252բ:—**Տողերը՝** 16—17:—**Գծումները՝** առանց ճնշումի:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի հասարակ մանրանկարչություն: Կան ութ գլխազարդեր (2ա, 25ա, 56բ, 88բ, 116ա, 149ա, 178բ և 208բ), լուսանցազարդեր, թռչուններ և զարդեր: Մատյանն ունի նաև թռչնագրեր և զարդագրեր:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Մաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Մանոթություն՝** ձեռագիրը նվեր է ստացված Կահիրեից ոոդոստոցի տիկին Օվանովիչի կողմից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի մագաղաթյա պահպանակի վրա)

Ղազազ, Ղազէլ, ին: (Կան նաև թվեր և գրչափորձեր):

Թ. 1ա.—(Գրչափորձեր): Կանաս կրտ. ասպէս:

Թ. 250բ.— ...ացն և սրբոց հայրապետ:

Թ. 251ա.—Ղազէլին հարսնիքըյ արանք ՌԺՂԱ (1742 թ.—Ն. Մ.) դեկտեմբերի ԺԴ-ին: Հասցէ, Ղազէլ ... (չորս տող սրբված է):

(Ձեռագրում կա սպիտակ մի թղթակտոր, որի վրա գրված է)

Օվանովիչ, Ռոստոթոչէն, հիմայ Գահիրէ:

№ 339

ԱՂՕԹԱԳԻՐՔ

(Հարեշերեն)

Թերթերը՝ 59:—**Պրակները՝** 6, յուրաքանչյուրը 10-ական թերթից, բացի վերջինը՝ Զ՝ 9 թերթ է:—**Մեծությունը՝** 13,8×9,2×2,7 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ:—**Կազմը՝** հաստ տախտակ:—**Պահպանակները՝** սկզբում վեց թերթ դեղնած մագաղաթ:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** պահպանակի բոլոր էջերը դատարկ են, նաև 18բ, 58բ, 59ա և 59բ:—**Տողերը՝** 12:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** ամհարական հարեշերեն (սեմական լեզու):—**Զարդագրություն՝** չունի, միայն վերնագրերն և որոշ բառեր գրված են կարմիր թանաքով:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** 17—18-րդ դարեր:—**Վայրը՝** Եթովպիա:—**Մանոթություն՝** ձեռագիրն նվեր է ստացված Եթովպիայից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Մագաղաթյա պահպանակի 6-րդ թերթի կոնակում)

Մաղագաթեայ ձեռագիրս յԱնուն Ս. Գէորգայ (Կիօրկիս) Աղօթագիրքը կը յիշատակեմ ձեռամբ Յովսէփ Ծ. վ. Կարապետեանի Ս. Էջմիածնայ մատենադարանին: 16—3—1926

Ատտիս-Ապըպա Հայկ Երզնկացեան

№ 340

ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՏԱՂԱՐԱՆ

Թերթերը՝ 392 (390+թ. 298ա+թ. 345ա):—**Պրակները՝** **անհայտ** (կազմի տակ մնացած լինելուն կարելի չեղավ հաշվել):—**Մեծությունը՝** 14,6×10,8×3,8 սմ.:—**Նյութը՝** սպիտակ բարակ թուղթ:—**Կազմը՝** կարմիր կաշեպատ ստվարաթուղթ, որի վրա ճնշումով ոսկեգույն խաչ և սկիհ է նկարված: Կազմի կողքին մեծատառ երկաթագրով գրված է հետևյալը. «Զայնագրեալ Տաը(պետք է Ղ լինի—Ն. Մ.)ատրան»:—**Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական կապույտ հաստ թուղթ, որի վրա ոսկեգույն նախշեր կան:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա—6բ, 7բ—8բ, 23բ, 29բ, 36բ, 71բ, 77բ, 84բ, 88բ, 96ա, 103ա, 137բ, 346բ, 373բ—381ա, 388ա—390բ:—**Տողերը՝** 5:—**Գծումներ՝** չունի:—**Գիրը՝** նոտրգիր և հայկական նոր խազեր:—**Զարդագրություն՝** չունի: Ձեռագրում կան միայն երկու սև-սպիտակ տպագիր սրբանկարներ (346ա և 381բ) և 11 գունավոր նկարներ (8 և 9-րդ թերթերի մեջտեղը մի նկար, 23ա, 29ա, 36ա, 71ա, 77ա, 84ա, 96բ, 103բ, 137ա և 299բ: Բոլոր այս նկարները առնված են Հիսուսի, Աստվածածնի և սրբերի կյանքից: Տպագիր այս բոլոր սրբանկարները եվրոպական են, տարածված լինելով կաթոլիկ եկեղեցու կողմից:—**Գրիչը՝** Հարություն Աստվածատուրյան:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** մայիս 1891 թ.:—**Վայրը՝** Երուսաղեմ:—**Մանոթություն՝** մատյանն ստացված է նվեր Կիպրոսից, երաժշտագետ գրչի որդու՝ Արմենակ Աստատուրյանի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ամբողջությամբ հայկական նոր խազերով գրված այս ձեռագրում տրվում են պատարագի մասեր, շա-

բականներ և տաղեր: Ստորև տրվում է մի քանի վերնագրերը միայն):

Թ. 9ա.—Շարական հանդերձի յորժամ զգենու:

Թ. 46բ.—Մեղեդի Ցարութեան. ծանր:

Թ. 72ա.—Մեղեդի Համբարձման, Հոգեգալստեան և Վարդավառի:

Թ. 87բ.—Մեղեդի Մարտիրոսաց. ծանր:

Թ. 97ա.—Մեղեդի Ապաշխարութեան. ծանր:

Թ. 136բ.—Սրբասացութիւն ծննդեան, Աւետեաց, Վարդավառի և Աստուածածնայ:

Թ. 159բ.—Սրբասացութիւն եկեղեցւոյ, Կիւրակէի, Ծաղկազարդի և Հրեշտակաց:

Թ. 300ա.—Տաղք, Տաղ Աւետեաց:

Թ. 356բ.—Տաղ Հայրապետաց, Առաքելոց, Մարգարէից, Մրգնաւորաց, Թագաւորաց, Կուսանաց:

Թ. 365ա.—Ցաւելուածք:

Թ. 382ա.—Ցանկ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Հիշատակարանը տպագիր է)

Թ. 7ա.—Ձայնագրեալ երգեցողութիւն սրբոյ պատարագի.

Ընդօրինակեաց Ցարութիւն Աստուածատուրեան.
Ա. Ժոգ. Վ.ոժ.

1891 մայիս յԵրուսաղ(պետք է Ղ լինի—Ն. Մ.)էմ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 6բ.—Նուէր Հայաստ(ան)ի իր որդւոյն Արմենակ Աստուրեանի կողմանէ:
Նիկոսիա, Կիպրոս, 1969:

Թ. 202բ.—(Երիցս կրկնեալ):

Թ. 206բ.—(Երիցս կրկնեալ):

Թ. 324բ.—Սոյն եղանակին տակ կերթայ Խաչի տաղն. այսինքն, որ զփրկական խորհուրդ:

№ 341
ՏԱՂԱՐԱՆ

(Հայերեն և հայատառ տաճկերեն)

Թերթերը՝ 90:—**Պրակները՝** 5, յուրաքանչյուրը 20-ական թերթից, բացի Ե՝ 10 թերթ է:—**Մեծությունը՝** 15,2×10×1,5 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** բարակ ստվարաթուղթ:—**Պահպանակները՝** սկզբում մի հատ հաստ թուղթ:—**Վիճակը՝** թեպետև պակաս թերթ չկա, սակայն որոշ թերթեր անջատված են:—**Գրությունը՝** միապյուն:—**Դատարկ թղթեր՝** չկան:—**Տողերը՝** 16;—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** շատ հասարակ է: Կա մի նկար միայն ամբողջ էջի ծավալով (սկզբի պահպանակի վրա), մի հատ հասարակ գլխազարդ (1ա) և մի քանի թոչնագրեր ու զարդագրեր:—**Գրիչը՝** Երուսաղեմցի Սարգիս:—**Պատվիրատուն՝** մահտեսի Եսայի:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1757 թ.:—**Վայրը՝** Երուսաղեմ:—**Ծանոթություն՝** ձեռագիրը 1965 թ. հոկտեմբերի 3-ին ստացված է նվեր Նյու-Յորքից Օննիկ և Արշալույս Գալեմքերյան ամոլի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագրում կան միջնադարյան տաղեր նվիրված Երուսաղեմին, Էջմիածնին, Քրիստոսին, զանազան սրբերին, հայերեն և տաճկերեն լեզուներով: Ստորև տրվում է դրանց վերնագրերը, իսկ վերջում որպես նմուշ տրվում են երկու տաղեր միայն):

Թ. 1ա.—Տաղ ի վերայ Սուրբ յԵրուսաղէմի:

Թ. 4ա.—Տաղ ի վերայ Սուրբ Ցակոբայ (տաճկերեն):

Թ. 6ա.—Տաղ ի վերայ Սուրբ յԵրուսաղէմի (տաճկերեն):

Թ. 7ա.—Տաղ ի վերայ Ծննդեան Քրիստոսի (տաճկերեն):

Թ. 8ա.—Տաղ ի վերայ Սուրբ Ցարութեան տաճարին (տաճկերեն):

Թ. 10ա.—Տաղ ի վերայ Սուրբ Գողգոթային Քրիստոսի:

Թ. 12ա.—Տաղ ի վերայ Ծննդեան Քրիստոսի (տաճկերեն):

Թ. 14ա.—Տաղ ի վերայ Սուրբ Երուսաղէմ քաղաքի (տաճկերեն):

Թ. 15բ.—Տաղ ի վերայ Ցարութեան Քրիստոսի:

Թ. 17ա.—Տաղ ի վերայ Պետրոսի և Պօղոսի:

Թ. 18ա.—Տաղ ի վերայ Սուրբ Գերեզմանին Քրիստոսի:

Թ. 20ա.—Տէր ողորմեայ առաջի Սուրբ Պատարագի:

Թ. 21ա.—Տաղ ի վերայ Սուրբ Կարապետի:

Թ. 24ա.—Տաղ ի վերայ Սուրբ Սողոմէի:

Թ. 26ա.—Տաղ ի վերայ Սուրբ Կիրակէի:

Թ. 29ա.—Տաղ ի վերայ Սուրբ Էջմիածնի:

Թ. 30ա.—Տաղ ի վերայ Սուրբ Ցովակիմայ և Աննայի:

Թ. 32ա.—Գովասանութիւն ի վերայ Սուրբ Ցակոբայ, ԻԵ (25) գեղեցիկ խորհանացն:

Թ. 35ա.—Տաղ ի վերայ Տնօրինականացն Քրիստոսի:

Թ. 36ա.—Տաղ ի վերայ Ցարութեան Քրիստոսի:

Թ. 37ա.—Աւետիս Ծննդեան Քրիստոսի (տաճկերեն):

Թ. 39ա.—Տաղ ի վերայ Սրբոյն Ցակոբայ:

Թ. 41ա.—Տաղ ի վերայ Սուրբ յԵրուսաղէմ քաղաքի (տաճկերեն):

Թ. 42բ.—Տաղ ի վերայ Սուրբ Աստուածածնի:

Թ. 44ա.—Տաղ ի վերայ Սուրբ Ցարութեան Քրիստոսի:

Թ. 46ա.—Տաղ ազնիւ ի վերայ Սուրբ յԵրուսաղէմի (տաճկերեն):

Թ. 47բ.—Տաղ ի վերայ Ցարութեան Քրիստոսի:

Թ. 49բ.—Տաղ ի վերայ Սրբուհոյ Աստուածածնին: (Մեկ տողը հայերեն, մյուսը տաճկերեն):

Թ. 51ա.—Տաղ Սուրբ Աստուածածնի:

Թ. 52ա.—Տաղ բարեկամին Քրիստոսի Սրբոյն Ղազարու:

Թ. 54ա.—Տաղ ի վերայ Խաչելութեան Քրիստոսի (տաճկերեն):

Թ. 55ա.—Տաղ Սուրբ Առաքելոցն Պետրոս և Պօղոսի:

Թ. 56բ.—Տաղ ի վերայ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի:
Թ. 58ա.—Յորդորակ ասէ ի վերայ ամենայն Սրբոց (խառը կերպով տողերի մեկ մասը հայերեն է, իսկ մյուսը՝ տաճկերեն):
Թ. 60ա.—Տաղ ի վերայ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի (նույն ձևով հայերեն և տաճկերեն խառը կերպով):
Թ. 61ա.—Տաղ ի վերայ Ծննդեան Քրիստոսի:
Թ. 63ա.—Աղերս ի վերայ Խաչելութեանն Քրիստոսի:
Թ. 65ա.—Տաղ ի վերայ Սուրբ Խաչ գիւտին:
Թ. 67ա.—Երգ Տիրամօր Կուսին Մարիամու:
Թ. 68ա.—Յորդորակ ասէ ի վերայ Ադամայ և Եւայի:
Թ. 70ա.—Աւետիս Ծննդեան Քրիստոսի:
Թ. 71ա.—Ասէ Սուրբ Յակոբայ միջի ԻԵ (25) գեղեցիկ խորանացն:
Թ. 73բ.—Պատմութիւն ի վերայ Սուրբ Տնօրինականացն Քրիստոսի (գրված է արձակ):
Թ. 89ա.—Տաղ ի վերայ Սուրբ Զատկին:
(Տրվում է ստորև երկու օրինակ)

Թ. 1ա.—**Տաղ ի վերայ սուրբ յԵրուսաղէմի:**

Ըռէմլիէ ծովուն մօտիկ.
յԵրուսաղէմ խիստ խորոտիկ,
կուգայ յարքայութեան հօտիկ.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Երուսաղէմ կանաչ դաշտ է.
միջի մարդն խաչապաշտ է.
Քրիստոս մեր հետն հաշտ է.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:

Թ. 1բ.—Երուսաղէմ խաս քաղաք է.
լոյսնի վերայ ճառագայթ է.
ամէն օր միշտ պատարագ է.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Սուրբ փրկիչն է էվան էվան.
հրեշտակապետ յոսկի բերան.
սուրբ Յակոբ յաշխարհիս տիւան.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Գեր (Ց)որդանան մկրտութեան.
սուրբ վերնատուն հաղորդութեան.
սուրբ Գողգոթայ խաչելութեան.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Երուսաղէմ խիստ փառօք է.

Թ. 2ա.— եկեղեցիք մէջն լիք է.
բովանդակն ուխտատեղիք է.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Երուսաղէմ ով որ կու գայ.
հոգւով մարմնով կուրախանայ.
բանն գործն սէյրան կընայ.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Երուսաղէմ ով որ կու գայ.
Արքայութեան կու մերձենայ.
պսակ և փառք է միշտ ունայ.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Աւագ խորան յոսկի ջրած.
Պօղոս Պետրոս վրան շինած.

Թ. 2բ.—աչքս տեսաւ խնդքս գնաց.
մեղայ քեզ տէր Քրիստոս փառաց:
Երուսաղէմ ոսկի խնձոր.
Էկօղն գտանէ գանձ հոգևոր.
մահտեսութեան անունն նոր.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Երուսաղէմ վեց դուռ ունի.
մտնօղն շնորհօք կու լինի.
զի Աստուած քաղաք ասի.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Սուրբ վերնատուն վեր հայեցայ.
Ելայ ի վեր զարհուրեցայ.
անուշ հոտոյն յոյժ (զ)մայլեցայ.

Թ. 3ա.— յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Էջմիածին յետոյ շինած.
սուրբ Սինայ նոր խորան օծած.
յերկիրպագեն յերից վիմաց.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Երուսաղէմ պարծանք մարդկան.
սուրբ տեղիքն մեզ օգնական.
ամենեքեան լինին արժան.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Երուսաղէմ քարոտ տեղ է.
լեռներն ամէն ծառ ու ճեղ է.
հողն ու քարն մեղաց դեղ է.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:

Թ. 3բ.— Երուսաղէմ քաղաքն տեսայ.
գիտցայ թէ նոր մօրէս ծնայ.
արեգական նման լցվայ.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Երուսաղէմ է գեղեցիկ.
բոլորն ամէն յեկեղէցիք.
հողն ու քարն համբուրէցինք.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:
Երուսաղէմ քաղաքն օրհնած.
ուխտաւորքն աղօթք կանգնած.
սուրբ Սիոնէ վանք օրինած.
յեկայք ի սուրբ յԵրուսաղէմ:

Թ. 29ա.—**Տաղ ի վերայ սուրբ Էջմիածնի:**

Իշման Միածնի Աստուծոյ բանին.
ի Վաղարշապատ սրբոյ քաղաքին,
ուռամբ ոսկեղէն հարեալ հզօրին.
սուրբ Էջմիածին տաճարտ աննման:
Ղամպայր լուսեղէն վառեալ տիպ դրախտին.
դուստր փեսային. հարսն առագաստին,
զքեզ ներակերտեալ Տրդատ արքային.
սուրբ Էջմիածին խորանդ աննման:
Աստածօր յայտնեալ փեսայն Քրիստոսին.
ի հօրէ ծագեալ շող աստուածային,
համանման վերնոյն սրբոյ Սիոնին.
սուրբ Էջմիածին կամարտ աննման:
Զօրօք բազմութեամբ իջեալ արքային.

Թ. 29բ—լուով զարդարեալ առագաստ քոյին,
ուրախ լեր բերկրեալ հարսն աստուածային.
սուրբ Էջմիածին տաճարտ աննման:
Աստուածակերտեալ սրբոյ տաճարին.
տեղի աթոռին սուրբ Լուսաւորչին,
շինեալ յարկ նորին հոյակապ ուխտին.
սուրբ Էջմիածին խորանտ աննման:
Ռենական զլոյսն տեսեալ Գրիգորին.

ի յարթումն անուն մեր հայրապետին,
թնդմամբ անդնդոց սանդարամետին.
սուրբ Էջմիածին կամարտ անձնման:

(Վերջին հինգ տների առաջին տողերի սկզբնատառերը «Ղազար» անունն են կազմում: Ըստ երևույթին սույն տաղի հեղինակը պետք է լինի Ղազար քահանա Ստամպոլցին, որ 17-րդ դարի վերջերին ապրում էր Երուսաղեմի ս. Հակոբ վանքում):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 90բ.—Գրեցաւ այս գեղեցիկ գովասանաց տէտրիկս ի վայելուչ մայրաքաղաքն սուրբ յԵրուսաղէմ, ի թուին Հայոց ՌՄԶ (1757 թ.—Ն. Մ.) ամին, ի վայելումն Մահտեսի Եսային: Ո(ր) ետուր յիշատակ հոգևոր որդ(ին), որ է աշակերտ տիրացու Ղազարի(ն): Որ և Աստուած բարի վայելումն տացէ իւրն և իւր սիրելի բարեկամացն և արժանի արասցէ կըրկնակի մարմնաւոր աչօք զայս օրհնեալ քաղաքիս սուրբ յԵրուսաղէմայ: Որ և համբուրեն զլուսածագ գերեզմանըն Քրիստոսի և ամենայն սուրբ տեղիքն տեսանեն, և մեղաց թողութիւն խնդրեն, ննջեցելոց յարքայութիւն, աշխարհիս խաղաղութիւն ամէն: Դարձեալ յիշեցէք զմեղսամած յԵրուսաղէմցի Սարգիս գրիչըս:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Քովասանք:
Թ. 45բ.—Մունետեմ:
Թ. 46ա.—Վար տը ցոստյարըմ:

(Ձեռագրում մի սպիտակ թղթակտոր կա, որտեղ գրված է նվիրատուների անունն ու հասցեն)

Onnig & Arshaloos Kalemkerian,
4640 Broadway,
New York, N. Y., U. S. A.
3—10—65 թ.

№ 342

ԺԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 160:—**Պրակները՝** 20, յուրաքանչյուրը 8-ական թերթից:—**Մեծությունը՝** 15×10,3×2,7 սմ.:—**Նյութը՝** մաքուր դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ: Երկու բռնիչներից մեկն ընկել է:—**Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա—2բ, 126բ, 160ա, 160բ:—**Տողերը՝** 19—20:—**Գծումները՝** ննշումով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրությունն՝** ձեռագիրն ունի գեղեցիկ յոթ գլխազարդեր (3ա, 12ա, 55ա, 70ա, 115ա, 120ա և 127ա), ինչպես նաև լուսանցազարդեր, զարդագրեր, թռչուններ, խաչեր, հրեշտակ և ծաղկեկողով: Բոլորը նկարված է սև թանաքով միայն:—**Գրիչը՝** անհայտ, սակայն անուն-ազգանվան սկզբնատառերն են Յ. Փ. Մ.:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** Վրթանես;—**Ժամանակը՝** 18—19-րդ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** մատյանը նվեր է ստացվել արտասահմանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա.—Ցաղագս արհեստի ճարտասանութեան: Գիրք առաջին: Ցաղագս սահմանի ճարտասանութեան և բաժանման մասանց նորին:

Թ. 12ա.—Ցաղագս առաջնոյ մասին ճարտասանութեան, այսինքն յաղագս գտման: Գիրք երկրորդ: Ցաղագս կրկնակի պաշտօնի ճարտասանին ի գտման և յաղագս ոմանց պահանջեցելոց առ գտումն:

Թ. 55ա.—Ցաղագս երկրորդի մասին ճարտասանութեան, այսինքն տրամադրութեան: Գիրք երրորդ: Ցաղագս նախապետական մասանց ասացուածոց և թէ զինչ իցէ սկսուածն:

Թ. 70ա.—Ցաղագս երրորդի մասին ճարտասանութեան, այսինքն յաղագս ճոխաբանութեան: Գիրք չորրորդ: Թէ զի՞նչ իցէ ճոխաբանութիւն և որք իցեն յատկական պայմանք նորին:

Թ. 115ա.—Ցաղագս չորրորդի մասին ճարտասանութեան, այսինքն յաղագս յիշողութեան: Գիրք հինգերորդ: Թէ զի՞նչ իցէ յիշողութիւնն և ի քանիս անջատի:

Թ. 120ա.—Ցաղագս հինգերորդի ի մասին ճարտասանութեան, այսինքն յաղագս արտաբերութեան: Գիրք վեցերորդ: Թէ զինչ իցէ արտաբերութիւն և որք իցէ օգտակար:

Թ. 124ա.—Ցանկ գլխոց ճարտասանութեան:

(Ձեռագրի վերջին մասում, թթ. 127ա—159բ, կան աղոթքներ և ոտանավորներ, գրված հանգավոր և արձակ: Սրանցից երկու նմուշ տրվում է ստորև):

Թ. 153բ.—Եթէ քաւեսցես, կարօղ ես.
Եթէ բժշկես, զօրաւոր ես.
Եթէ կենդանացուցանես. բաւական ես.
Եթէ շնորհես. առատ ես.
Եթէ ողջացուցանես. հնարաւոր ես.
Եթէ պարգևես. ամենալի ես.
Եթէ արդարացուցես. ամենարուեստ ես.
Եթէ մխիթարես. ամենիշխան ես.
Եթէ նորոգես. ամենակալ ես.
Եթէ հրաշագործեսցես. ամենաթագաւոր ես.
Եթէ վերստին հաստատես. արարիչ ես.
Եթէ կրկին գոյացուցանես. Աստուած ես.
Եթէ հոգաս ընդ մեր. ամենատէր ես.
Եթէ կոչես ի մեղաց. այցելու ես.

Թ. 154ա.—Եթէ չարժանեացս ընձեռես. օրհնեալ ես.
Եթէ յորուղէն զերծուցանես. փրկիչ ես.
Եթէ զեղցես ի քոյոց ի մեզ. հարուստ ես.
Եթէ նախ քան ի մէնջ խնդրելն դու կարկառեսցես. անկարօտ ես:
Եթէ լայն ես նեղութեան. անդորրիչ ես.
Եթէ զվերջացեալս կոչես. խնամակալ ես.
Եթէ զասանելս հաստատես. վէմ ես.
Եթէ պասքելոյս արբուցանիցես. աղբիւր ես,

(Շարունակելի)